Մ. Կարապետյանին
տեղեկանքի կարգով
տրամադրել
28.11.2017թ. Մ. Մարտիրոսյան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
քարտուղարության ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

ՏԵՂԵԿԱՆՔ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ նոյեմբերի 27-ին Երևանում տեղի է ունեցել «Կոռուպցիայի կանխարգելումը և մարդու իրավունքների պաշտպանությունը. Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) Հայաստանի վերաբերյալ առաջարկությունների իրականացումը» խորագրով համաժողով: Համաժողովը կազմակերպվել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Եվրոպայի խորհրդի, ՀՀ դատական իշխանության և ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից՝ «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում:

Միջոցառմանը մասնակցում էին բարձրաստիճան պաշտոնատար անձինք, դեսպաններ, փորձագետներ և այլն: Համաժողովին մասնակցելու նպատակով Երևանում էր գտնվում նաև Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO)-ի գործադիր քարտուղար Ջիանլուկա Էսպոսիտոյի գլխավորած պատվիրակությունը: Իբրև հարգանքի դրսևորում պատվիրակության անդամներին հանձնելու նպատակով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ձեռք է բերել 48.450 (քառասունութ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրանքի կոնյակներ:

Տեղեկացնում եմ նաև, որ նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը Բրյուսելում (Բելգիայի Թագավորություն) մասնակցում է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի գլխավոր վեհաժողովին: Վեհաժողովին մասնակցում են մի շարք պետությունների օմբուդսմանի հաստատությունների և միջազգային իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչներ: Նախատեսվում է նաև հանդիպում ԵՄ օմբուդսման տիկին Էմիլի Օ'Ռեյլիի հետ: Այցի նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ձեռք է բերել 103.000 (հարյուր երեք հազար) ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրանքի կոնյակներ՝ համապատասխան ներկայացուցիչներին հանձնելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
օգնական

Ջուլիետա Բաղդասարյան
28.11.2017